Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.
Տաթևիկ Ռևազյան

2. Զբաղեցրած պաշտոնը.
ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները.
Թուրքմենստան, քաղաք Աշգաբադ, 2019 թվականի սեպտեմբերի 5-7-ը:

4. Հրավիրող կողմը.
ՀՀ-ում Թուրքմենստանի դեսպանությունից ստացված հայտագրով՝ Թուրքմենստան է հրավիրվել ՀՀ պատվիրակություն՝ հայ-թուրքմենական առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր թուրքմենական ավիացիոն իշխանությունների հետ քննարկել «Թուրքմենական ավիաուղիներ» ավիաընկերության կողմից Աշգաբադ-Երևան-Աշգաբադ չվերթերի վերսկսումը, օդային փոխադրումների իրավունքի 5-րդ ազատության կիրառմամբ Աշգաբադից Երևան և եվրոպական քաղաքներ չվերթերի հնարավորությունը:

6. Քննարկված թեմաները
«Թուրքմենական ավիաուղիներ» ավիաընկերության կողմից դեպի Երևան փոխադրումների իրականացման առևտրային հնարավորությունները, չվերթերի վերսկսումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակներում հայկական պատվիրակությանն ընդունել է քաղաքացիական ավիացիայի «Թուրքմենհովայոլլարը» գործակալության ղեկավար Դյովրան Սաբուրովը: Հանդիպմանը մասնակցել են նաև «Թուրքմենական ավիաուղիներ» գործակալության գլխավոր տնօրեն Բայրամ Բայմըրադովը, Թուրքմենստանում ՀՀ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Արշակ Գևորգյանը և դեսպանության երրորդ քարտուղար Մարիաննա Ֆիդանյանը: Հանդիպման սկզբում նշվել է, որ հայկական կողմը հետաքրքրված է քննարկել «Թուրքմենական ավիաուղիներ» գործակալության կողմից շուրջ մեկ տարի իրականացված Աշգաբադ-Երևան-Ֆրանկֆուրտ չվերթի վերագործարկման հնարավորությունը: Ի պատասխան Դ.Սաբուրովը նշել է, որ

ընկերությունը ևս շահագրգռված է չվերթի վերաբացմամբ՝ բավարար արդյունավետության մակարդակ ապահովելու պարագայում:
Տեղեկացվել է, որ ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն ներկայացրել է օրենսդրական փոփոխությունների առաջարկ՝ ավիաընկերությունների նոր ուղղությունների համար օդային ուղևորներից գանձվող պետական տուրքը հանելու համար և, քանի որ Աշգաբադ-Երևան-Ֆրանկֆուրտ չվերթը արդեն 1 տարուց ավելի է, ինչ դադարել է գործել, վերագործարկման պարագայում այն կդիտվի որպես նոր ուղղություն:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ երկու կառույցների միջև քննարկումները կշարունակվեն աշխատանքային կարգով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ակնկալվում է, որ թուրքմենական կողմը կվերանայի ԻԱՏԱ աերոնավիգացիոն Ամառ-2020 ժամանակաշրջանում դեպի Երևան փոխադրումների իրականացման առևտրային հնարավորությունները, չվերթերի վերսկսումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

X _____

17-ը սեպտեմբերի, 2019թ.